

19:30 - 16 / Յունվար / 2017

Արևմտամետության մանկական հիվանդությունը

👍 Առաջարկված 2

🗨️ Կիսմել

🐦 Tweet



Երբ 1991թ.-ին հրատարակվեց Ռաֆայել Իշխանյանի «Երրորդ ուժի բացառման օրենքը» աշխատությունը, դժվար էր պատկերացնել, որ հայաստանյան քաղաքական դասի մտածելակերպում այն ժամանակ գերիշխող մանկամիտ ռուսամետությունը քարորդ դար անց կվերակերպվի նույնքան մանկամիտ արևմտամետության:

Նորանկախության 25-երորդ տարում հայաստանյան քաղաքական դասի /ներառյալ մեղիա տարածքը, փորձագետները, ՅԿ-ները և այլն/ գերիշխող մասը հպարտորեն խոսում է արևմտամետ լինելու մասին, հռչակում անիմաստ կարգախոսներ և փաթաթում կեղծ, հաճախ վտանգավոր օրակարգ:

«Արևմտյան կողմնորոշումը նշանակում է Հայաստանի տնտեսական զարգացում», «Ռուսաստանը շահագրգռված չէ դարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման մեջ, իսկ ԱՄՆ-ն և Եվրամիությունը ցանկանում են հարցը խաղաղ կարգավորել», «Պատժամիջոցների և միջազգային դիտորդների օգնությամբ Հայաստանում կանցկանցվեն արդար ընտրություններ», «Արևմուտքը շահագրգռված է, որ Հայաստանը լինի կայուն և ժողովրդավարական երկիր», «Այ եթե ստորագրեինք Ասոցիացման պայմանագիրը, Եվրոպական շուկաների հաշվին տնտեսական վերելք կապրեինք», - սա իրենց արևմտամետ հռչակած գործիչների խոսքի գրեթե բառացի մեջբերումներ են: Այսպիսի մանկական մտքերի շարանն անվերջ է: Բանը հասել նրան, որ արևմտամետությունը հայտարարվում է, որպես նախընտրական քաղաքական պլատֆորմ, իսկ հռետորաբանությունը կրում է ռուսատյացության տարրեր: Արևմտամետության/ռուսատյացության դեմ արտահայտվող եզակի ձայները միանգամից պիտակավորվում են «գործակալներ» և ռուսամետներ /ընդորում, չգիտես ինչու, արևմտամետը, by default, առաջադեմ է, իսկ հակադրվողները՝ խավարմիտ/:

Եթե իրենց «արևտամետ» հռչակածները այս ամենն անեին միայն մանր-մուկ շահերից /ինչպես ակնհայտորեն անում է այդ գործիչների մի մասը/, կարելի էր չանհանգստանալ: Սակայն, արևմտամետությունը և դրա հետ կոմպլեկտում եկող ռուսատյացությունը ավելի շատ քաղաքական դասի և հասարակության սովոր զանգվածների անկեղծ մոլորություն է և այդ մտածելակերպի սրընթաց տարածումը և միտումնավոր բուժումը դառնում նույնպես վտանգավոր, ինչպես 25 տարի առաջ ռուսամետությունն էր:

«Запад нам поможет»

Արևմուտքի ֆետիշացումը սկիզբ է առնում խորհրդային տարիներին: Սովետական քաղաքական ստերիլության Pleasantville-ում գործում էր սև-սպիտակ բարի-չար պարզունակ արժեհամակարգ: Խորհրդային մարդկանց մոտ Արևմուտքի նկատմամբ կար քնքշական վերաբերմունք: Երկաթյա վարագույրը սառեցրել էր մեր շփումը արտաքին աշխարհի հետ և դասակարգային պայթյալի սև-սպիտակ տրամաբանության մեջ ամեն մի սովետական վատն էր, ամեն մի Արևմտյան՝ լավը:

1990-ականներին շատերին թվում էր, թե հենց որ ազատվենք խորհրդային ռեժիմից Արևմուտքը գրկաբաց կընդունի մեզ, կօգնի, կճանաչի մեր արդար իրավունքներն Արցախում:

Սակայն, կամաց-կամաց սկսեցինք հասկանալ, որ Արևմուտքը՝ արժեքներից բացի ունի շահեր, շատ կոնկրետ շահեր. կոնկրետ գեոպոլիտիկ շահեր /հիշենք, ինչպիսի շոկ էր Գոբլի պլանի հրապարակումը/, կոնկրետ տնտեսական շահեր /հիշենք, որ ԵՄ-ն պահանջում էր փակել մեր ատոմակայանը/, կոնկրետ անհատական շահեր / հիշենք, թե ինչպես էին տարբեր տրամաչափի եվրախոսականները մեզ կերակրում անպտուղ բանաձևերով/, կոնկրետ կոռուպցիոն շահեր /հիշենք, նաֆթադոլարների ու caviar diplomacy-ի արդյունքում ծնված հակահայկական բանաձևերը/ և այլն: Եվ թե ինչպես են արժեքները հաճախ /ույնիսկ, կարելի է ասել, միշտ/ ստորադասվում են կոնկրետ շահերին /հիշենք, թե ինչ արագությամբ Արևմուտքը մարտի 1-ը փոխանակեց հայ-թուրքական արձանագրություններով կամ ինչպես լռեց Ադրբեյջանից ֆինանսավորվող UNESCO-ն, երբ ոչնչացվեցին Ջուղայի խաչքարները/ և այլն, և այլն:

Այդ ամենով անցած հայկական պոլիտիկումը, պետք է, որ հասունանար և սթափ գնահատեր իրավիճակը: Դժբախտաբար, դա այդպես չէ: Եվ եթե, քնական է, որ քաղաքական դաշտը բաժանվում է արևմտա- և ռուսամետների ասեք, Ուկրաինայում կամ Մոլդովայում /ուր այսօր են իրականանում են այն հասարակական-քաղաքական գործընթացները, որոնք Հայաստանում ավարտվել են 1990-ականներին/, ապա տարակուսելի է, որ մետոթյունը ռենեսանս է ապրում Հայաստանում:

ԻՆՉՊԵՏ ՌՈՒՄԱՍԵՏՏՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱԾՎԵՑ ԱՐԵՎՏԱՄԵՏՏՈՒԹՅԱՆ

Այսօրվա մանկամիտ արևմտամետության հաղթարշավի պատճառներն արժե վերլուծել: Կողմնորոշումային մտածելակերպը քաղաքականության մեջ կարելի է համեմատել ծնողներից երեխայի կախվածության հետ: Որոշակի տարիքում դա նորմալ է, սակայն մեծանալու հետ երեխան սկսում է անկախանալ և ինքնուրույն

քայլեր անել: Իքնուրույն քայլերի հետ համակցված է սխալ գործելու վախը և անվստահությունը սեփական ուժերին և ուստի՝ ապավինումն այլոց /մեծերին/:

Մոտավորապես այս վիճակում էր մեր պոլիտիկումը խորհրդային շրջանում՝ մենք վստահ էինք, որ առանց ռուսների մի օր էլ չենք գոյատևի և բավական է, որ ռուսները հեռանան Հայաստանը կվերանա աշխարհի քարտեզից: 1990-ներին ռուսամետները՝ այն ժամանակվա պոլիտիկումը գերիշխող ուժը դեմ էին Հայաստանի անկախացմանը, ընդորում ոչ միայն Հայաստանում, այլև Սփյուռքում / հիշենք, ՀՀԴ հայտնի հայտարարությունը/: Նրանք հորդորում էին գերծ մնալ անկախությունն հռչակելուց և դեմ չգնալ կենտրոնին՝ Ռուսաստանին /ԽՍՀՄ-ին/: Ռուսամետների և «անկախականների» գաղափարական պայթյալի գագաթնակետին էլ հրատարակվեց «Երրորդ ուժի բացառման օրենքը» աշխատությունը: Բարեբախտաբար, հայաստանյան քաղաքական մտքում հաղթեց «անկախական» մտածելակերպը, որը քաղաքականության հիմքում դրեց արժեքները և շահերը, ապավինումը սեփական ուժերին, այլ ոչ թե կողմնորոշումը: Արդյունքում, մենք չմնացինք փլուզվող կայսրության փլատակների տակ և ունեցանք լուրջ հաջողություններ: Ի դեպ, հենց այդ ժամանակ մենք ունեինք շատ ջերմ հարաբերությունները ռուսների հետ: Կարծես թե, մենք ազատվել էինք կողմնորոշումային ախտից և վերջանականապես վերադարձել զարգացած պետությունների սկզբը, որտեղ կան արժեքներ և շահեր և չկան կողմնորոշումներ և մանկական կախվածություններ: Ինչպես երևում է, դա այդպես

չէ: 2000-ականներից սկսած արհեստականորեն կանգնեցվեցին քաղաքական գործընթացները և պոլիտիկումը լայն իմաստով մնաց զարգացման «մանկական տարիքում»: Եվ այսօր, երբ երկիրը հայտնվել է ծանր վիճակում կողմնորոշումային ախտը ռեցիդիվ է տալիս:

Անհաջողություններին դիմակայելու մեծ հաշվով 2 մոտեցում կա՝ հասուն / սխալների, այդ թվում սեփական, վերլուծություն/ և մանկական /մեղավորների փնտրտուք/: Երեխան միշտ մեղադրում է դասախոսին, երբ վատ գնահատական է ստանում /այ որ ուրիշ դասախոս/դպրոց լինել, լավ գնահատական կստանայի/: Եվ եթե խորհրդային տարիներին ամեն ինչում մեղավոր էին թուրքերը, իսկ փրկիչներն էին՝ ռուսները, ապա այժմ մեղավորը՝ ռուսներն են և, այ եթե մոտեցնեք Եվրասոցիալիզմի համակարգ /ուրիշ դպրոցում սովորեցնեք/, ամեն ինչ լավ կլինի: Այսպիսով, մանկամիտ ռուսամետությունը վերակերպվել է ևսլոյնական մանկամիտ արևմտամետության, և Ռ.Իշխանյանի դիպուկ բնորոշմամբ, «Երրորդ ուժին ապավինելու ասպետները» մեր օրերում, հիմնականում, արևտամետ են:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐԵՎՄՈՒՄԵ - ՌՈՒՍԱՍՏԱՆ

Հայաստան - Արևմուտք հարաբերությունների պատմությունը, իհարկե, առանձին թեմա է, սակայն, հարկ է կազմել, որ, մեր պետության մի քանի հազարամյա պատմության ընթացքում այդ հարաբերությունները տարբեր վայրիվերումներ են ունեցել. գլխավոր գեոպոլիտիկ հակառակորդից /Հայաստանն ու Հռոմը/ մինչև կարևորագույն ռազմավարական դաշնակից /Կիլիկիո ժամանակներում/: Դրա հետ մեկտեղ, հայկական քաղաքակրթական արժեհամակարգը, իր առանձնահատկություններով հանդերձ, իհարկե, Արևմտյանի մաս է հելլենիզմից և քրիստոնեությունից մինչև իրավունք, հայերը միջերկրածովյան ժողովուրդ են /այլ ոչ թե կովկասյան/, իսկ Երևանն էլ, անշուշտ, եվրոպական քաղաք է: Պատահական չէ, որ հենց հայկական պավլիկյան շարժումը ծնեց միջևադարի առաջին հանրապետությունը և խթանեց եվրոպական Վերածնունդը:

Հայ-ռուսական հարաբերություններում առանձնակի ելևէջներ չեն եղել: Դրանք եղել են, հիմնականում, վատ, մեր կողմից՝ ստորադաս - օբյեկտիվ /Հայաստանի պետականության պիկին ռուսական պետություն չի եղել/ և սուբյեկտիվ /ռուսական գաղութային մտածելակերպի առանձնահատկություններ, հայ քաղաքական մտքի սևանկություն, արժանապատվության պակաս/ պատճառներով:

Այս տարբերություններով հանդերձ, թե Արևմուտքը և թե Ռուսաստանը Հայաստանի նկատմամբ իրենց քաղաքականությունը կառուցել են կարծր դիրքերից, բացառապես շահերից ելնելով: Այդ շահերն էլ վերջին 300 տարվա ընթացքում տեղավորվում էին նախ great game-ի, ապա՝ սառը պատերազմի տրամաբանության մեջ, մինչդեռ մեզ թվում էր, թե երկուսն էլ առաջնորդվելով արժեքներով պետք է փրկեն մեզ Օսմանյան կայսրությունից կամ վերադարձնեն հողերը.....

Փաստը մնում է փաստ. վերջին 300 տարվա ընթացքում մենք չենք կարողանում գտնել հարաբերությունների ճիշտ մոդուսը ոչ Արևմուտքի, ոչ էլ Ռուսաստանի հետ: Դրա պատճառները մենք, հիմնականում, տեսնում ենք վերջինների դավադիր պահվածքում՝ ֆրանսիացիները դավադրաբար փախան Կիլիկիայից, անգլիացիները ստիպեցին մեզ զորքերը հանել Բաքվից և Մարնեուլից, չթողեցին Արցախ, ռուսները Արևյան Հայաստանի կեսը հանձնեցին թուրքերին և երեքն էլ միասին գումարած ԱՄՆ-ն ոչինչ չարեցին Ցեղասպանությունը կանխելու կամ գոնե պատմական արդարությունը հաստատելու համար: Անշուշտ, այդ բոլոր մեղադրանքները տեղին են: Բայց, Արևմուտքի/ռուսների այդպիսի պահվածքի պատճառներից է նաև այն, որ վերջին 300 տարվա մեզ չի հաջողվում գերտերությունների հետ կառուցել շահերի վրա հիմնված արժանապատիվ հարաբերություններ և մենք մանկական խանդավառությամբ և ազնիվ մոլուկներով ընկնում ենք սրա կամ նրա գիրկը, մոռանալով որ մեծերի աշխարհում խաղի կանոններն այլ են և որ բացի արժեքներից և սիմպատիաներից կան կոնկրետ պետական շահեր:

ԵՎՐԱՉԵՍ ԹԵ ԵՎՐՈՊԱՉԵՍ

Սրա-ևրա գիրկը ընկնելու մանկամտությունն էլ թելադրում այսօրվա քաղաքական տհաս օրակարգը և դրա ամենակարևոր «դիլեման»՝ ԵՄ ասոցիացում, թե Մաքսային միություն:

Եվ ահա այստեղ է, որ ի հայտ են գալիս մի շարք ուղղակի կեղծ թեզեր, որոնք կրճատ կարելի է ձևակերպել այսպես՝ «Եթե ասոցիացվեցինք ԵՄ-ի հետ մեր երկրում կհաստատվեն կյանքի եվրոպական ստանդարտներ, իսկ եթե միանանք ՄՄ-ին, ապա երկիրը կթաղվի կոռուպցիայի և վատ կառավարման ճիրաններում:»

Իդիլիկ այս պատկերը անհրաժեշտ է փառատել: ԵՄ-ի հետ ասոցիացումից հետո մեզանում մեծ հաշվով ՈՉԻՆՉ չի փոխվելու, որովհետև.

ԵՄ ասոցիացումը որևէ կերպով չի փոխելու ժողովրդավարության, մարդու իրավունքների և արդարության վիճակը Հայաստանում, ինչպես չի փոխել, ասենք, ԵՄ հետ ասոցիացված թունիսում: ԵՄ-ն ընդհանրապես կապ չունի ժողովրդավարության/մարդու իրավունքների հետ, դա Եվրատնօրհուրդի առանձնաշնորհն է, որին Հայաստանն անդամակցում 2001-ից և վերջին 15 տարիներին ականատես ենք այդ ոլորտների զգալի «բարելավմանը».

ԵՄ ասոցիացումը ինքնին չի ապահովելու ԵՄ ներդրումները: Դա ապահովվում է միմիայն ԵՄ անդամակցության գործընթացի ընթացքում կառուցվածքային հիմնադրամների /EU structural funds/ և այլ կառույցների կողմից: Իսկ անդամակցության հեռանկար մենք չունենք, որովհետև, ԵՄ անդամակցության թեման մոտակա 50 տարվա համար փակ է Նույնիսկ Արևմտյան Բալկանների երկրների համար, էլ չեմ ասում մեր տարածաշրջանի.

ԵՄ ասոցիացումը չի նշանակում Նույնիսկ վիզային ռեժիմի դյուրացում: Դրանք իրարից անկախ գործընթացներ են: Բայց, Նույնիսկ եթե նշանակեր, ինչ էիք շահելու...Ինչ տվեց Մոլդովային վիզային ռեժիմի դյուրացումը: Անձնագրային անցակետում 50 եվրոյի առկայությունն ապացուցելու ստորացուցիչ ընթացակարգ: Թե դրանից հետո, Մոլդովան դադարեց լինել Եվրոպայի ամենաաղքատ երկիրը:

Իհարկե, դժվար է պատկերացնել արտագաղթի խնդրով մտահոգ քաղաքական գործիչ, ով կողմ լիներ վիզային ռեժիմի դյուրացմանը, այդուհանդերձ, այս հարցը ամենաշահարկավորներից է և արժեր անդրադառնալ.

Հետևաբար, ԵՄ ասոցիացումը չի բերելու համընդհանուր բարեկեցությանը և ՈՉԻՆՉ չի փոխելու այդ առումով: Ինչպես չի փոխել, ասենք Վրաստանում: Այդ երկրի ներդրումների առյուծի բաժինն ընկնում է Թուրքիայի, Ադրբեջանի, Ռուսաստանի, Չինաստանի և Ճոնգի երկրների վրա: Ավելին, Վրաստանի տնտեսական թռիչքի կարևոր գրավականներից էր, երբ այսօրվա հայկական չափանիշներով արևտամետ համարվող Սահակաշվիլին իր երկրից վոնդեց Արևմտյան Ֆինանսական կազմակերպություններին, երբ հասկացավ, որ իր երկրի շահերին դեմ է այն, ինչ պարտադրվում է իրենց կողմից:

ԵՄ-ն դա Ստրասբուրգի սրճարանները և մարդու իրավունքների հռչակագրերը չեն: ԵՄ-ն դա, առաջին հերթին, զարգացած արդյունաբերությունն է, առաջադեմ տեխնոլոգիաները և սոցիալական հարաբերությունները: Մեր տնտեսության և wealth distribution-ի այսօրվա վիճակով ուզում ես ԵվրաՉԵՍ մտի, ուզում ես՝ ԵվրոպաՉԵՍ - ոչինչ չի փոխվելու: Վերջապես, ԵՄ անդամների մեջ, ասենք, Լյուքսեմբուրգից բացի, կան Բուլղարիա և Ռումինիա, որոնց Հայաստանը բարեկեցությամբ կարող անցնել 2-3 տարում /իհարկե, զարգացման քաղաքականության դեպքում/:

ԵՄ ասոցիացումը ՈՐԵՎԷ կապ չունի արժեքների և ինքնության հետ: Հայկական քաղաքակրթությունը Արևմտյան քաղաքակրթության մաս է և հայաստանցիները ուզում են և պետք է ապրեն Եվրամիության զարգացած երկրների նման: Բայց, ԵՄ ասոցիացումը սրա հետ որևէ առնչություն չունի:

Այսպիսով, ԵՄ - ՄՄ ընտրությունն ամենաին քաղաքակրթական ընտրությունն է: Սա ընդամենը տվյալ պատմական հանգրվանում կոնկրետ շահերից բխող ընտրություն է և դրա դրական և բացասական կողմերը պետք է քննարկվեն միմիայն այդ տեսակյունից:

ԱՐԺԵՔՆԵՐ ԵՎ ՇԱՅԵՐ

Ցավոք, այսօրվա Հայաստանի քաղաքական դասը կարիք ունի վերստին սովորելու երրորդ ուժի բացառման օրենքը, տարբերել շահերը և արժեքները, հասկանալ, որ Արևմուտքը /ինչպես և Ռուսաստանը/ Հայաստանի բարեկամը չէ, ոչ էլ թշնամին և այլ տարրական բաներ: Այս ամենի մեջ ամենատագնապալին այն է, որ, ի տարբերություն 1990-ի, այսօր չի ձևավորվում mainstream պետական, կամ եթե ուզում եք, «անկախական» քաղաքական բևեռ և գաղափարական «պայթարը» գնում է արևմտամետների և ռուսամետների միջև:

«Եվ այսպես, այսօր մեր միակ ճիշտ ուղին և առաջնահերթ խնդիրը մեր ժողովրդի հոգեկան և մտավոր ինքնուրույնացումն ու անկախացումն է, Հայաստանի վերահայացումը՝ երրորդ ուժի բացառման օրենքով» - նշում է Ռ.Իշխանյանը նկատի ունենալով ռուսամետությունը: Այսօր նույնը կարելի է ասել նկատի ունենալով արևմտամետությունը:

Պետություն - քաղաքականություն կատեգորիաներիաներում հասուն քաղաքական դասի համար առաջնային պետք է լինի թո երկրի պետական շահը հիմնված արժեքների վրա, սեփական ուժերին ապավինելը, այլ ոչ թե -մետությունները: Հռոմի պապից թագ ստանալը չէր խանգարում Կիլիկիո արքաներին ջերմ հարաբերություն ունենալ մոնղոլների հետ:

Եվ մինչև «Ես որպես արևտամետ/ռուսամետ քաղաքական գործիչ» արտահայտությունը արմատախիլ չարվի հայաստանյան պոլիտիկոմի բառապաշարից, կամ առնավզն չմարգինալացվի, Հայաստանը չի կարող վերադառնալ իրական զարգացման ուղի:

ԱՐԱՄ ՊԵՏՐՈՍԵԱՆ